

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Կ. Հ. Գևորգյան

ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԲԵՐՈՒՄԸ ՆՍԱՆ ԱՅԼ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՑ

Լեզվի մեջ հասկացություններն ու գաղափարները արտահայտվում են բառերի միջոցով: Դրանք կարող են արտահայտվել ինչպես մեկ, այնպես էլ երկու կամ ավելի բառերով: «Ջուրը՝ փոքրին, խոսքը՝ մեծին» նախադասության մեջ յուրաքանչյուր հասկացության հատկացված է մեկական բառ՝ «ջուր», «խոսք», «մեծ»: Նույնն է նաև հաջորդ նախադասություններում: «Ջուրն իր ճամփեն կգտնի»: «Ամռան որ պառկեմ հովեր, ձմռան կսատկեն կովեր», «Պտղատու ծառի ճյուղերը կռացած կլինեն» և այլն: Այժմ վերցնենք հետևյալ նախադասությունը. «Սատանայի ապտակների հետ խառը բուսել էին նաև եզան լիզու կոշիկ տերևները, որոնք կարծես սատանայի սպտակների մանրացած տեսակը լինեին, սակայն ողորկ և ջղուտ»: Այստեղ մեկական բառով արտահայտված հասկացությունների կողքին կա երկու հասկացություն, որ արտահայտված է երկուական բառերով՝ «սատանայի ապտակ» և «եզան լիզու»: Եվ կամ՝ «Ուստան վարագույրը ետ տարավ... Հեղնարը ծունկ էր շոքել և կիսաբաց շրթունքներով աղոթք էր անում<sup>2</sup>...»: Այս նախադասության մեջ երկուական բառ է հատկացված «ետ տանել», «ծունկ շոքել», «աղոթք անել» հասկացությունների համար:

Այն դեպքում, երբ հասկացությունը կապվում է երկու կամ ավելի բառերի հետ, այդ բառերը վերջնական իմաստը պարունակում են իրենց միասնության մեջ՝ տվյալ կապակցությունը ամբողջությամբ վերցրած: Եթե նման կապակցություններից մի բաղադրիչն անջատենք կամ փոխարինենք այլ բաղադրիչով, ապա միանգամայն կփոխվի կապակցության վերջնական իմաստը, և կամ իսպառ այն կվերանա: Այդ պատճառով էլ դրանք միշտ հանդես են գալիս միասնաբար՝ որպես պատրաստի գործածվող միավորներ, որպես կայուն բառակապակցություններ:

Կայուն բառակապակցությունները լեզուների բառային ֆոնդի մի հիմնական ու սովոր մասն են կազմում, նույնչափ կարևոր, որքան բառային ֆոնդի մյուս մասը՝ առանձին ինքնուրույն բառերը: Ահա կայուն բառակապակցությունների մի քանի օրինակներ. շտապ օգնություն, պատի թեք, դիմադրություն ցույց տալ, հարց ու փորձ անել, սատանի ձին նստել (հակառակվի), օրի պես զնալ, ավազի պես մնալ (տատանվել, զնալը հետաձգել): Ինչպես երևում է օրինակներից, այս հասկացություններին հատկացված են երկուսից մինչև վեց բառ:

Նույնպես, ոռոսերեն՝ «повестка дня», «паровое отопление», «принять решение», «душа в пятки ушла».

Անգլերեն՝ «year by year», «lilly of the valley», «break heart», «lay heads toge thear».

Որո՞նք են կայուն բառակապակցությունների հատկանիշները:

Ա. Ամենից առաջ, ինչպես ասացինք, բառակապակցությունը պետք է բաղկացած լինի երկու կամ ավելի առանձին ինքնուրույն բառերից: Սա անհրաժեշտ պայման է՝ այն տարբերելու համար բառից կամ բառաբարդությունից: Բաղադրիչների թիվը կարող է հասնել վեցի, բացառիկ դեպքում՝ նաև յոթի:

Բ. Կայուն բառակապակցությունների մյուս հատկանիշը, ինչպես տերմինն է ցույց տալիս, կայունությունն է: Բառակապակցությունների բաղադրիչները վերջնական իմաստը արտահայտում են ոչ թե առանձին-առանձին, այլ համատեղ, միասնության մեջ: Այս պատճառով լեզվի մեջ նրանք միշտ հանգես են դալիս անբաժանելի: Սա նշանակում է, որ եթե նման բառակապակ-

1 Մ կ ր տ ի շ Ա ր մ ե ն, Հեղնար աղբյուր, էջ 140:

2 Նույն տեղում, էջ 103:

ցություններից անջատենք որևէ բաղադրիչ, կամ կփոխվի նրանց իմաստը, կամ իսպառ կիմաստազրկվեն: Օրինակ՝ «պատի թերթ», «պատի պահարան» բառակապակցություններից անջատենք «պատ» բառը: Մենք կունենանք նախկիններից շատ բանով տարբերվող նոր հասկացություններ: Իսկ խոսքը մեկ անել, խոսքը չվանին դնել (ասածը ընդունել), խոսքը տեղ չճասնել (չըմբռնել) բառակապակցությունները կիմաստազրկվեն՝ նրանցից որևէ բաղադրիչ անջատելու դեպքում:

Կայուն բառակապակցությունները նաև անթափանցելի են: Նրանց կազմության մեջ լրացուցիչ բաղադրիչներ ավելացնել հնարավոր չէ: Որպես կանոն, նրանց բաղադրիչների միջև միջանկյալ բառեր կամ նախադասության հատված չին կարող ընկնել: Լինում են դեպքեր, երբ բաղադրիչները միմյանցից հեռացվում են, կամ իմաստը բացահայտող նոր բաղադրիչ է ավելանում: Ինչպես՝ «խոսքի տակ մնալ» (պատասխան չտալ, չհակաճառել), «տուն շինել» (բարձրության հասնել), «ոտքը երկարել» (բարձր բանի ձգտել): Բայց՝ «Անզորությունից Մամամը անսպասելի փղձկաց... Եթե տիկինը չլիներ, չէր մնա Ահարոնի խոսքի տակ»<sup>3</sup>, «Լավ կշինեինք մեր տունը, եթե պաշտոններս թողած՝ ավազակների հետ ընկերություն անեինք»<sup>4</sup>, «Ոտքը շատ է երկարում սոված զկրտացողի զավակը»<sup>5</sup>, Այստեղ «Ահարոնի», «մեր», «չատ» բառերը մտել են հիշյալ բառակապակցությունների կազմի մեջ:

Որոշ դեպքերում էլ բառակապակցությունների բաղադրիչները կարելի է փոխարինել նրանց հոմանիշներով կամ մոտ իմաստի բառերով: Այսպես. գործածվում են՝ խոսքը չվանին դնել, բայց նաև՝ խոսքը պահանջն դնել (խոսքը ընդունել, բանի տեղ դնել): Ձեռքը երկար, կուռք երկար (կարող, ունևոր), ծովը տանել, ծառավ ճետ բերել, ջուրը (աղբյուրը) տանել, ծառավ ճետ բերել (խորամանկել), զլուխը տափացնել, կատարը տափացնել (զինովնալ) և այլն:

Գ. Կայուն բառակապակցությունը տվյալ լեզվով խոսող հանրության կողմից գիտակցվում է որպես պատրաստի գործածվող միավոր: Սրանումն է հիմնական տարբերությունը, որ կա կայուն ու ազատ բառակապակցությունների միջև: Խոսքի մեջ մենք բառերը գործածում ենք՝ կապակցելով միմյանց հետ: Այս բանը կատարվում է ըստ խոսողի ցանկության: Կախված անհրաժեշտությունից (կոնտեքստ, թեմա, տրամաբանական շեշտ և այլն), խոսողը կարող է միմյանց հետ ցանկացած ձևով կապակցել այս կամ այն բառերը: Դրանք կարելի է ետևառաջել, ընդմիջել այլ բառերով, կրկնել և այլն: Այլ կերպ ասած՝ կապակցությունն այս դեպքում ազատ է և պահանջի դեպքում՝ այն կարելի է տարրալուծել: Կայուն բառակապակցությունները խոսքի մեջ չէ, որ մտնում են կապակցության մեջ: Նրանք այդպես պատրաստի գոյություն ունեն և խոսքից դուրս:

Խոսողը դրանք գործադրում է այնպես, ինչպես առանձին ինքնուրույն բառերը՝ առանց տեղում կազմելու: Այս պատճառով կայուն բառակապակցությունները անշրջելի են, իսկ նրանց տարրալուծումը կատարվում է ձևական մոտեցմամբ: Այս հատկանիշը, որ կայուն բառակապակցությունները գիտակցվում են որպես պատրաստի միավորներ, նրանց տարբերում է շարույթից և դերբայական դարձվածից: Վերջիններս մեկանգամյա կայուն բառակապակցություններ են. կազմվում են խոսքի մեջ, խոսողի ցանկությամբ:

Դ. Կայուն բառակապակցությունները պետք է արտահայտեն որևէ հասկացություն կամ գաղափար: Այս տեսակետից անկախ բառերի ու կայուն բառակապակցությունների ֆունկցիաները նույնն են: Անկախ բառերը կազմված են ձևաբանական, իսկ բառաբարդությունները՝ ինքնուրույնությունը կորցրած բառերից և ունեն մեկ բառային շեշտ: Կայուն բառակապակցությունները կազմված են առանձին բառերից, որոնք որոշ շահով պահպանել են իրենց ինքնուրույնությունը, ունեն սեփական շեշտ և կապակցության մեջ են մտնում այլ բառերի հետ: Եվ իրոք, ինչպիսի կայուն բառակապակցություն էլ որ վերցնենք, լեզվի մեջ այն հատկացված է որևէ հասկացության կամ գաղափարի: Ինչպես, օրինակ՝ «պատվո տախտակ», «կարմիր անկյուն», «ցույց տալ», «առաջ քաշել», «դուռը բաց» (հյուրասեր), «ձեռ ու ոտ ընկնել» (խուճապի մատնվել):

Բերված օրինակներից յուրաքանչյուրն արտահայտում է մեկ առանձին հասկացություն: Այս հատկանիշի անտեսումը, ինչպես կտեսնենք հաջորդ պարագրաֆում, բերում է շփոթություններ և զծվարացնում տարբերակումն այլ կատեգորիաներից:

Երբման կայուն բառակապակցությունն իր արտահայտած իմաստով կարող է համընկնել անկախ բառի հետ: Նման դեպքերում նրանք դառնում են հոմանիշներ: Ինչպես, «խոսք տալ»՝ «խոստանալ, «աղոթք անել»՝ «աղոթել, «անուն դնել»՝ «կոչել, «սիրտը բաց»՝ «սրտաբաց, «սերնալ

3 Ս. Խ ա ն զ ա ո յ ա ն, Մխիթար Սպարապետ, էջ 205:

4 Պ. Պ ա ո շ յ ա ն, Հունոն, Երկեր, հատոր 2-րդ, էջ 588:

5 Ս. Խ ա ն զ ա ո ղ լ ա ն, Մխիթար Սպարապետ, էջ 47:

պինդ»՝ պնդերես և այլն: Երոթյուն ունեն ոչ միայն հասկացություններ, այլև կապական, շաղկապական ու հուզական իմաստներ արտահայտող կայուն բառակապակցություններ: Ճիշտ այնպես, ինչպես կան նույն տիպի անկախ բառեր: «Համենայն դեպս», «Թե չէ», «քանի որ» կայուն բառակապակցությունները շաղկապներ են: «Աստուծո սիրուն», «դու քո աստված», «զուտ-խը քարը», «հենց անիծած», «մերը շմեռի» հուզական բառակապակցություններ են՝ մոտ ձայնարկությունների ֆունկցիային և նշանակում են՝ խնդրանք, անփութություն, դովեստու նույնպիսի օրինակներ են՝ «Թե որ», «ախ ու վախ», «այ ջան», «աչքիս լրա» և այլն:

Եվ այսպես, Լինկոլդ վերը նշված հատկանիշներից, մենք կարող ենք տալ կայուն բառակապակցությունների հետևյալ սահմանումը:

Մեկու կամ ավելի առանձին բառերից կազմված բառակապակցությունները, օրեմ կայուն կառուցվածով պատրաստի գործածվող միավորներ են և արտահայտում են օրև ճակագություն կամ գաղափար, կոչվում են կայուն բառակապակցություններ:

Թե ինչու այս կամ այն հասկացությունն արտահայտելու համար լեզվի մեջ դիմում են կայուն բառակապակցությունների և ոչ առանձին բառերի ու բառարարողությունների՝ լեզվարանության ապագա ուսումնասիրության հարց է: Ինչպես նկատում է Ա. Վ. Կուսինը իր «О фразеологических сращениях в современном английском языке» («Иностранные языки в школе») հոդվածում (1953 թ.), Բալին և Բոդվեն դր Կուրտենեն կայուն բառակապակցությունների առաջադեմ պատճառը համարում են հիշողության մեջ վերջիններիս ավելի լավ ամրանալը: Այս զուտ հոգեբանական մոտեցումը բավարար պատճառարանություն չէ:

Լեզուներն այս բանին հասել են բառակազմական տեխնիկայի որոշ փուլում, համենայն դեպս՝ հարադրություններից ոչ շուտ: Լեզվական որոշ արստրակցիա էր անհրաժեշտ, որպեսզի առանձին բառեր մտնեին հարակցական կապի մեջ, դիտվեին որպես մեկ ամբողջություն և ըմբռնվեին որպես որևէ հասկացություն: Այս հարցում որոշող պայման կարող են հանդիսանալ տվյալ լեզվի բառարարության հնարավորությունները: Եթե բառարարության տեխնիկան թույլ է, ապա դիմում են բառակապակցություններին:

Երբեմն անխուսափելի է լինում բաղադրիչների թվի շատությունը: Այդպիսիք մեկ բառով արտահայտելու դեպքում առաջ կգար երկարարանում, ձգձգվածություն: Հաճախ էլ բոլորովին անհնար է դառնում բառարարությունը: Այս առանձնապես վերաբերում է պետությունների, հիմնարկությունների, կազմակերպությունների անվանումներին: Վերջապես, դեր են խաղում նաև բնախոսական, հեշտ արտասանության և, անշուշտ, դեռևս չլուսարանված այլ պայմաններ:

Մյուս կողմից, պատմական երկար ժամանակի ընթացքում կայուն բառակապակցությունները գործածելիս զգացվում է ձգձգվածություն: Եվ լեզվի մեջ եթե մի կողմից առանձին բառերից կազմվում են կայուն բառակապակցություններ, ապա մյուս կողմից՝ կայուն բառակապակցությունները սեղմելով ստանում են բառարարողություններ: Իհարկե, բոլորը չէ, որ ենթարկվում են այս փոփոխությանը: Առաջին հերթին բառարարվում են առավել բանականները: Հայերենում այսպես են առաջացել «սրտարաց» (սիրտը բաց), «հաստակող» (կողը հաստ), «աչքակապություն» (աչքերը կապել) և այլ բարդ բառեր:

Նույն պահանջով են առաջ եկել հապավումները, որոնք այլ բան չեն, քան երկար բառակապակցությունները կրճատելու և հեշտ արտասանելու միջոց: Ահա դիտելով տեխնիկայի պարտաճանկարացման օրենքի փոքրիկ մի օրինակ լեզվի բնագավառում, Նրա բանաձևը կլինի՝ առանձին բառեր, կայուն բառակապակցություններ, դարձյալ առանձին բառեր նոր որակով՝ բառարարողությամբ: Այս երևույթն առանձին ուսումնասիրության արժանի նյութ է:

Հայերենը՝ ունի կայուն բառակապակցությունների երեք շերտ: Առաջին շերտը հարադրություններն են: Մեր լեզուն շատ հարուստ է հարադրություններով և, ինչպես նկատել են հայ լեզվաբանները (պրոֆ. Գ. Սևվակ, «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»), մասնավորապես բայական հարադրություններով: Ոչ բայական հարադրությունները կարող են լինել բառերի (հեշտ մեծամասնությամբ՝ երկու բառի) պարզ հարադրմամբ: Ինչպես՝ «ուսուցիչ-աշակերտ», «երես-մայր», «բույր-եղբայր»: Երբեմն հարադրումը կատարվում է միևնույն բառի կրկնությամբ՝ «զուգընդ-զուգ», «երկր-երկիր», «օր ըստ օր» և այլն:

Մյուս տեսակը, ինչպես ցույց է տալիս պրոֆ. Սևվակը վերոհիշյալ աշխատությունում, բաղ-նյուսական հարադրություններն են: Այստեղ բառերը միմյանց են հարադրվում «և» կամ «ու» շաղկապների օգնությամբ: Օրինակ՝ «Հարց ու փորձ», «վեր ու վար», «առ ու տուր»:

Պետք է նկատել, որ բաղնյուսական հարադրություններում բառերը ավելի հաճախ լինում են երկու բնույթի: Նրանք կարող են լինել հակառակներ: Ինչպես. «սխառ ու կաց», «անց ու գարձ», «աչ ու ձախ», «թարս ու շիտակ»: Կարող են լինել հոմանիշներ և կամ մոտ իմաստի

բառեր, այնպես որ այս դեպքերում երկրորդ եզրը բացահայտում ու շեշտում է առաջին եզրի իմաստը: Օրինակ՝ «տուն ու տնո», «խոսք ու զրույց», «երդ ու նվագ», «տեր ու տնօրեն» և այլն:

Բայական հարադրությունները կազմվում են հետևյալ ձևերով: Կարող են կազմվել միայն բայերից՝ «զալ հասնել», բայց ավելի հաճախ առաջին եզրը լինում է այլ խոսքի մաս, վերջինը՝ բայ: Այդպես են՝ «տեղ հասնել», «ցած թռչել», «կանաչ հագնել», «ծափ զարկել», «մեջ ընկնել», «ախ քաշել», «վաշ ու վիշ անել» և այլն, և ինչպես նկատում է Ա. Արրահամյանն իր «Բայը ժամանակակից հայերենում» գրքի առաջին հատորում, հարադրավոր բայերում ոչ բայական եզրը կարող է կրկնվել՝ «ետ-ետ գնալ», «պտույտ-պտույտ գալ»: Հարադրությունը կարող է բազմակցած լինել երկու մասից՝ որն է բաղճուսական հարադրությունից և բայից: Ինչպես «անց ու դարձ անել», «հարց ու փորձ անել», «դես ու դեն նայել»: Ընդ որում, բաղճուսական մասի եզրերը կարող են կրկնվել: Ինչպես՝ «շուռ ու մուռ տալ», «ետ ու զեռն ոկսել»:

Ինչպես ցույց են տվել պրոֆ. Արեգյանն ու պրոֆ. Սեվակը, հայերենի շարժում և տեղ ցույց տվող հարադրությունները համապատասխանում են ռուսերենի նախդիրների օգնությամբ կազմվող բայերին: Սա նշանակում է, որ նման բայերը հայերենն արտահայտում է կայուն բառակապակցությունների միջոցով, իսկ ռուսերենը՝ անկախ բառերի: Այսպես, օրինակ՝ եթե հայերենը գործածում է «ենքս մտնել», «դուրս գալ», «առաջն առնել», «ետ մնալ», «վեր թռչել», «թռչել գնալ» բառակապակցությունները, ապա ռուսերենը համապատասխանաբար՝ «ВОЙТИ», «ВЫЙТИ», «предотвратить», «оставать», «вскочить», «улететь». Այսպիսի բառերը և՛ հայերենում, և՛ ռուսերենում մեծ թիվ են կազմում: Ռուսերենի նկատմամբ նույն դրության մեջ են պարսկերենն ու անգլերենը:

Հայերենում կայուն բառակապակցությունների մյուս ստվար շերտը բաղադրյալ բառերն են: Այս դեպքում բառերի հարադրում չի կատարվում: Բառակապակցությունների առաջացման պատճառները բաղադրյալ բառերում բոլորովին այլ են: Այստեղ կարելի է հանդիպել ազատ բառակապակցություններում գործող գրեթե բոլոր բառակապակցման տեսակներին ու միջոցներին:

Լեզվի մեջ երբեմն դիմում են ոչ թե բառարարությունների, այլ կայուն բառակապակցությունների՝ բաղադրյալ բառերի, բաղադրիչների կազմության կամ երկարության պատճառով: Ցանկության դեպքում էլ հնարավոր չէր լինի բառարարովի սպառազինությունների մրցավազք», «բարի կամքի մարդիկ», «խաղաղության աղավնի»: Այսպիսի կայուն բառակապակցություններն այդ բառերից տարբերվում են նրանով, որ բաղադրիչներն առանձին բառեր են, սակայն սրանք էլ բարդ բառերի նման արտահայտում են մեկ ընդհանուր իմաստ՝ մեկ հասկացություն: Նույնպիսի բաղադրյալ բառեր են «կուլտուրայի ու հանգստի պարկ», «ոտըր ոտքի վրա զցել», «պետական 3 տոկոսանոց ներքին շահող փոխառություն», «կենտրոնական ջեռուցում», «լայն սպառման առարկաներ» և այլն:

Բաղադրյալ բառերի են դիմում նաև այն դեպքում, երբ տվյալ լեզվի բառարարման տեխնիկան հնարավորություններ չի տալիս արտահայտելու համապատասխան իմաստները մեկ բառով, կամ երբ բառարարելիս նախկին իմաստը կարող է միանգամայն փոխվել: Բաղադրյալ բառերի առաջացման մյուս պատճառն էլ վարժավածությունն է: Մեկ անգամ վարժված լինելով հասկացությունն արտահայտել բառակապակցությամբ՝ այդպես էլ շարունակում ենք լեզվում, թեև այն կարելի է արտահայտել նաև բարդությամբ: Այսպես, օրինակ, մենք գործածում ենք «օրաթերթ», «շաբաթաթերթ», բայց ոչ «պատաթերթ», այլ միայն «պատի թերթ»: Ունենք «գրատախտակ», բայց ոչ «պատվատախտակ», այլ միայն «պատվո տախտակ»: Կամ՝ «հովտաշուշան», «չրաշուշան», «թրաշուշան», բայց «սարի շուշան»:

Վերոհիշյալ պատճառներով լեզուներում տարածում են գտել բազմաթիվ կայուն բառակապակցություններ՝ բաղադրյալ բառեր: Հայերենում դրանցից կարելի է հիշել «պատվո տախտակ», «բաց նամակ», «խոսք բաց անել», «խոսք տանել-բերել», «ծծմբային թթու», «ծծմբական թթու», «գիսավոր աստղ»: Տեղին է հիշել, որ վերջին երկուսը գործածվում են նաև բարդությամբ «ծծմբաթթու» և «գիսաստղ»: Բայց, ասենք, «ծծմբային թթու» գործածել բարդությամբ հնարավոր չէ, որովհետև այն կշիռովի «ծծմբական թթվի» հետ, որ քիմիական այլ նյութ է: Այլ բաղադրյալ բառերից կարելի է հիշել «հավելյալ արժեք», «սահանջ տարի», «ծմեռ պապի», «որդան կարծիք», «քրականական այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ «ստորագրելիական վերադիր», «ստանդակ բայ», «դերբայական դարձված» և այլն:

Նկատելի է, որ լեզուներում առանձնապես դիմում են բաղադրյալ բառերին՝ տեսակների հարցում, երբ անհրաժեշտ է արտահայտել լայն ծավալ ունեցող հասկացության մեջ մտնող ուրիշ հասկացություններ: Ունենք «բզեզ» հասկացությունը: Բզեզի որոշ տեսակներ արտահայտվում են կայուն բառակապակցությամբ, ինչպես՝ «մայիսյան բզեզ», «կոթորագյան բզեզ»:

Սրանցից յուրաքանչյուրն ունի իր հատկանիշները (տարրեր միջատներ են): Նույնպես՝ «երաժշտության» տեսակները բաղադրյալ բառեր են՝ «թեթև երաժշտություն», «կամերային երաժշտություն», «սիմֆոնիկ երաժշտություն» և այլն: Պատահական չէ, որ տեսակների հարցում մի լեզու այլ լեզվի բաղադրյալ բառի դիմաց կարող է ունենալ մեկ բառ: Սա ցույց է տալիս, որ, իրոք, զործ ունենք կայուն բառակապակցության հետ: Այսպես, հայերենում ունենք «բողկ» և «ամսական բողկ»: Ռուսերենը այս երկուսն էլ արտահայտում է մեկական բառով՝ «средька», «редиска»: Իսկ ռուսերենի՝ «морской волк», «морская свинка», «морской еж» բառերի դիմաց հայերենն ունի «ծովագայլ», «ծովախոզուկ», «ծովոզնի»:

Գիտության ասպարեզում տեսակների հարցում կամ լայն ծավալի հասկացությունների մեջ մտնող ավելի նեղ ծավալի հասկացություններն արտահայտելիս՝ անհամեմատ ավելի հաճախ են դիմում բաղադրյալ բառերի: Ուստի այս կետում առանձնապես պետք է նշել գիտական տերմինները: Վերջնակա թեկուզ քերականական տերմիններից՝ «նախադասություն», «նախադասության տեսակները» բարդ նախադասություն, համադասական նախադասություն, ստորադասական նախադասություն, համաստորադասական կամ ենթաստորադասական նախադասություն, արտահայտված են բաղադրյալ բառերի միջոցով: Մասնատիկայից վերջնակա թեկուզ տերմինը: Թվի տեսակներն են՝ պարզ թիվ, անվանական թիվ, կլոր թիվ և այլն: Կամ իրավաբանությունից՝ «իրավունք»: Այս հասկացության ծավալի մեջ մտնող մյուս հասկացությունները ևս բաղադրյալ բառեր են՝ պետական իրավունք, քաղաքացիական իրավունք, քրեական իրավունք, միջազգային իրավունք:

Բացի վերոհիշյալ դեպքերից, բաղադրյալ բառերի մեջ մտնում են նաև բոլոր բառակապակցությունների օգնությամբ կազմված կոլումները: Ինչպիսիք են՝ «կաղնեմիայի իսկական անդամ, սպորտի վարպետ, արվեստի՝ վաստակավոր գործիչ, Սովետական Միության ժողովրդական արտիստ»:

Պետությունների, կազմակերպությունների, վայրերի բաղադրյալ անվանումները՝ Սովետական Սոցիալիստական Ռևոլյուցիոնների Միություն, Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկա, Մեծ Բրիտանիա, Միացյալ Արաբական Ռեսպուբլիկա, «Կարմիր խաչի» ընկերություն, «շտապ օգնություն», «ուսանողական գիտական ընկերություն», պատանի հանդիսատեսի թատրոն, Մեծ արջի համաստեղություն, Կարմիր բլուր, Վերին Արտաշատ, Սափորների հովիտ, արվեստի աշխատողների տուն: Այսպիսի անունները հաճախ ենթարկվում են հապավման: Ի դեպ ասենք, որ հապավման կարող են ենթարկվել միայն բաղադրյալ բառերը: Հապավման էլ հենց բաղադրյալ բառերը կրճատելու մի միջոց է: Բաղադրյալ բառեր են միջազգային գործածություն ստացած այն արտահայտությունները, որոնք չունեն փոխաբերական-այլարանական իմաստ: Այս արտահայտությունները մեզ են հասել դարերի խորքից և ասվել են պատմական որևէ նշանավոր իրադարձության առթիվ՝ ժամանակի նշանավոր անձանց կողմից: Այդպիսիք են՝ «աշխարհի ութերորդ հրաշալիք», «խաղաղության աղավնի», «լուսուլլոսյան ճաշ», «հոմերոսյան քրթիչ», «սիզիֆյան աշխատանք»:

Միջազգային մասշտաբով անթարգմանաբար գործածվող լատիներեն, հունարեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն և այլ լեզուներից տարածված արտահայտություններ, ինչպես՝ լատ. «alter ego» (մոտիկ բարեկամ), «persona non grata» (անցանկալի անձ), «altera pars» (մյուս, հակառակ կողմը), իտալ. «tempi passati» (անցած ժամանակներ, անցյալը), իտալ. «Per procura» (փոխանորդի միջոցով), լատ. «Ordre nature» (բնության կանոն, կարգ) և այլն:

Հայերենում կայուն բառակապակցությունների երրորդ, համեմատաբար փոքր, բայց յուրօրինակ շերտը դարձվածներն են:

Գարձվածներ են կոչվում որևէ հասկացություն կամ գաղափար արտահայտող փոխաբերական-այլարանական կայուն բառակապակցությունները: Փոխաբերական լինելու պատճառով դարձված վերջնական փաստացի իմաստը չի համընկնում նրա բաղադրիչների առանձին-առանձին արտահայտած իմաստների հետ: Օրինակ՝ ուտել բերք (արագաշարժ), ձեռք տալ (հարուստ), ձեռքեր լվանալ (հրաժարվել), ճավիհան առաջը դնել (հեռացնել, դուրս հանել), քաղով կարկուտով (մեծ դժվարությամբ), քրի տակ (շատ մոտիկ) և այլն:

Գ. Վահանյանն իր «Հայոց լեզվի ոճարանության» ձեռնարկում դարձվածներն անվանում է ոճեր՝ հիմնվելով «Հայերէն բացատրական բառարանի» վրա: Սակայն թե՛ Ստ. Մալխասյանցի, և թե՛ նրա նախորդների մոտ «ոճեր» հասկացությունը շատ ավելի լայն ծավալ ունի՝ «Հայերէն բացատրական բառարանում» ոճերի մեջ հիշված են հարադիրներ, դարձվածներ, առանձին ու ասացվածքներ, աֆորիզմներ: Ոճեր տերմինը շփոթվում է համանուն «ոճ» տերմինի հետ:

Շփոթությունը նամանավանդ կաճի դարձվածի ածանցավոր ու բառարարդված տերմինոլոգիական մյուս դեպքերում՝ դարձվածաբանական, դարձվածաբանություն և այլն:

Ա. Ա. Մուրվալյանը դարձվածները (իդիոմները) անվանում է դարձվածքային առանձնահատուկ արտահայտություններ: Նա դարձվածն ու մյուս կայուն բառակապակցությունները զանազան բառակապակցական միավորներ չի համարում: Մարձվածքային առանձնահատուկ արտահայտությունների և սովորական արտահայտությունների միջև հաճախ դժվար է լինում որոշակի սահման դնել: Ուստի զրանք ընդհանրապես կոչվում են դարձվածքներ» («Հայոց լեզվի դարձվածաբանություն», էջ 27): Ըստ որում, դարձվածներ տերմինը Ա. Մուրվալյանի մոտ նշանակում է ընդհանրապես կայուն բառակապակցություն: Նա քննությունը այդպես էլ տանում է, բաղադրյալ բառերն ու հարադրությունները շառանձնացնելով՝ դարձվածներից: Նույնպիսի դարձվածներ է համարում՝ չափից դուրս, մի քստ միսքե, հողի՞ն տալ, և խուփր ֆարին առնել (կյանքում արգելքի հանդիպել), շուն ու կատու դառնալ (գժտվել, վեճերի մեջ լինել), անկուրել ձմերուկ (չփորձված): Կամ 43-րդ էջում՝ խրճիթ-ընթերցաբան, գիսավոր աստղ, դեմֆր խոժոռել, աբգելված պտուղ (անմատչելի բան), կարապի երգ (կյանքում վերջին ստեղծագործությունը): Պարզ է, որ մի դեպքում գործ ունենք բաղադրյալ բառերի ու հարադրությունների, մյուս դեպքում՝ դարձվածների հետ:

Բաղադրյալ բառերի, հարադրությունների ու դարձվածի մաթեմատիկական սահմանը այսպրանությունն է: Սրանով իրարից զանազանվում են ինչպես տարրեր, այնպես էլ միմյանց հոմանիշ դարձվածն ու այլ կայուն բառակապակցությունը:

Դարձվածների ու բաղադրյալ բառերի սահմանները շփվում են ասույթների, թևավոր խոսքերի, առանձների ու ասացվածքների հետ: Պահանջ է զգացվում մի սահմանագիծ, որ զանազաններ միմյանցից տարբեր այս հասկացությունները: Աշխատություններում ու դարձվածաբանական բառարաններում կարծես շփոթություն կա. շատ ասույթներ ու թևավոր խոսքեր համարվում են կայուն բառակապակցություններ և նույն ձևով առանձներն ու ասացվածքները՝ դարձվածների: Ինչպես մի ձևերը ծափ չի տա, բնկածին շեն խփում, ձայն բազմաց՝ ձայն աստճո, ջուրն իր ճամփան կգտնի:

Ա. Մուրվալյանը «Հայոց լեզվի դարձվածաբանության» 45 էջում դարձվածներ է համարում կարճ ու դիպուկ առանձներն ու ասույթները: Բայց սա տարբերման քիչ բան ասող միջոց է. մանավանդ որ շատ ու շատ կարճ առանձներ ու ասույթներ հնարավոր չէ դարձված դիտել: Ինչպես մի ձևերը ծափ չի տա, բնկածին շեն խփում, ձայն բազմաց՝ ձայն աստճո, ջուրն իր ճամփան կգտնի:

Գ. Վահանյանն էլ «Հայոց լեզվի ոճարանության» ձևերով, խոսելով այն մասին, թե հայերենը թարգմանաբար դարձվածներ է փոխառնում ոուսերենից, բերում է հետևյալ օրինակը. Գայլին սատկացնում են ոչ թե նրա համար, որ ունի զորչ ազի, այլ նրա համար, որ կերել է մաքի» (էջ 58—59): Սա էլ խիստ երկար թղթաված է:

Սովետական լեզվաբանության մեջ այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Ա. Վ. Կուրնիեր վերևում արդեն հիշատակված հոդվածում: Ընդհանուր գծերով ահա թե ինչ տարբերություններ է նա նշում առածի և դարձվածի միջև:

Ա. Առածը, սովորաբար, շարահյուսորեն անջատման ենթարկվող պատկերավոր նախադասություն է, որի իմաստը, որպես կանոն, համապատասխանում է նրա բաղադրիչների իմաստներին: Դարձվածը բառագիտական ամբողջություն է և չի տարրալուծվում ո՛չ իմացաբանորեն, ո՛չ շարահյուսորեն:

Բ. Առածը հետապնդում է դիդակտիկ նպատակ (խրատ, նախազգուշացում), հաճախ արտահայտում է ժողովրդական իմաստություն: Դարձվածը մատնանշում է փաստը:

Գ. Առածը ավարտված գատողություն է, ասույթ, ծավալուն նախադասություն: Դարձվածի քերականական կառուցվածքը, սովորաբար, ավելի պարզ է: Այն կա՛մ նախադասության անդամ է, կա՛մ դարձվածաբանական համարժեք՝ բառ-նախադասությանը, սովորաբար երկախոսություններում:

Դ. Առածի իմաստը մեկ բառով արտահայտել հնարավոր չէ. մինչդեռ դարձվածը, շատ հաճախ, կարելի է:

Ինչպես տեսնում ենք, հեղինակին հարկ է եղել երբեմն դիմելու «որպես կանոն», «սովորաբար», «շատ հաճախ» բառերին՝ շանտեսելու համար այն բազմաթիվ բացառությունները, որ կարող են լինել հիշած կետերում առանձների կամ դարձվածների մեջ: Այնուհետև, մի՞թե դարձվածը երբեք չի արտահայտում դիդակտիկ իմաստ, նախազգուշացում է՞ «ունքը շինելու տեղ աչքը հանել»: Կամ՝ զո՞նե հայերենի օրինակով կարելի է ասել, որ բազմաթիվ դարձվածներ բացատրվում են երեք-չորս բառերով: Օրինակ. ֆարին-կապի՞ն գցել (արհեստական դժվարություն-

ներ ցույց տալով խնդիրը մերժել), ականջի տակովն անցնել (հարևանցիորեն մի բանի մասին մեկի կարծիքն իմանալ), մեռած տառ (թղթի վրա մնացող, չիրագործվող օրենք, կանոն), խոսքի վտուրը զցել (աննկատելիորեն խոսքի թեման փոխել), օրինակների շարքն անվերջ կարելի է շարունակել:

Հեղինակի նշած բացառությունները և այս օրինակները ցույց են տալիս, որ երբեմն առածները, ասացվածքներն ու դարձվածները, թեև վոր խոսքերն ու բաղադրյալ բառերը համընկնում են: Դարձվածաբանական բառարաններում լինում են հարկից շատ առածներ ու թեև վոր խոսքեր: Ահա ինչու ասում ենք, որ նրանց սահմանները շփվում են, բայց ոչ նույնանում: Ուրեմն ինչով են դրանք սահմանազատվում կամ համընկնում միմյանց: Բոլոր այն դեպքերում, երբ քննարկվող բառակապակցական միավորը կոչված է հասկացություն արտահայտելու, ապա այն դարձված է կամ այլ կայուն բառակապակցություն, իսկ եթե խոսք է՝ ապա այն ասույթ է, առած կամ ասացվածք:

Ա. Վ. Կունինի նշած առածի ու դարձվածի հատկությունները հասկացության ու խոսքի հատկություններն են: Միայն թե նրա մոտ լուսարանումը տվարտված չէ, մանավանդ որ չի վերաբերում բաղադրյալ բառերին ու թեև վոր խոսքերին:

Առածները երբեմն նույնացվում են դարձվածների հետ այն հիմնավորությամբ, թե դրանք ևս կայուն կառուցվածքով փոխարենական իմաստի բառակապակցություններ են: Բայց եթե այդպես մտածենք, առածանիները միաժամանակ դարձվածաբանական բառարաններ կարող են լինել: Հանելուկները, որ նույնպիսի կայուն պատկերավոր միավորներ են, կհամարվեն դարձված: Առածներն ու ասույթները կարող են շփված լինել: Եթե նկատի ունենանք կայուն կառուցվածքն ու փոխարենությունը, այսպիսով մենք կհասնենք բեյթերին, դիստիքոսներին ու քառյակներին:

Որպես տարբերություն առածների ու դարձվածների միջև՝ ուզում ենք ավելացնել նաև, որ առածների իմաստը կոնտեքստից դուրս կարելի է կոահել, որովհետև խոսքը շատ քան հուշում է: Անծանոթ դարձվածները հասկանալ հնարավոր չէ՝ շեքին աղ տալ, մազմանի աշակերտ, ծառ նեճնել, մեկի վրա լիմոն ֆամել և այլն, որ համապատասխանաբար նշանակում են՝ անգործությամբ զբաղվել, շառաչաղիմող, ոչինչ չսովորող մարդ, թաքցնելու նպատակով խոսակցության թեման աննկատ փոխել, մեկին շատ գերազանցել: Սակավ դեպքերում առածները փոփոխության ենթարկվելով՝ գործածվում են հարակատար, ենթակայական, անորոշ, շատ քիչ դեպքերում՝ ապառնի դերբայական դարձվածների ձևով: Այսպիսի դեպքերում դրանք արտահայտում են հասկացություններ ու վերածվում դարձվածների՝ ինչպես՝ առած՝ քամու բերածը քամին կտանի, բայց՝ ֆամու բերած, ֆամու տաբած:— Եվ նա շունի, տեր իմ,— արդարանում էր ծառաս,— ասենք՝ կլենն մարդիկ, որոնք իմ խոսքերս ֆամու բերած, ֆամու տաբած կհամարեն, բայց գյուղացիների մեջ էդպեսները քիչ են» (Պոռչյան, «Հունոն», էջ 442): Այս օրինակում այն նշանակում է սուտ, անհիմն, և դարձված է: Կամ առած՝ ավազի վրա տուն շեն շինի, իսկ ավազի վրա տուն շինել՝ նշանակում է անհիմն գործ բռնել, որ արդեն նույնպես դարձված է:

Երբ դարձվածը բայական է, խոնարհվում է սովորական բայերի պես՝ բոլոր ժամանակներով ու դեմքերով. ձեռք բերել, երես տալ: Որպես խոսք, առածը քարացած ձև է՝ մեծ մասամբ եզակի ու հոգնակի երրորդ դեմքով: Բայց երբ դարձվածն ու առածը համընկնում են, ապա վերջինս ևս կարող է խոնարհվել ունևր շինելու տևղ աշևր հանել:

Դարձվածաբանական բառարաններում պետք է ընդգրկել, մեր կարծիքով, այնպիսի առածներ, ասացվածքներ, ասույթներ ու թեև վոր խոսքեր, որոնք համընկնում են դարձվածների հետ, այսինքն՝ արտահայտում են հասկացություններ: Հայերենում այդպիսիներից են՝ շունը տիրոջը շի (չէր) նանալում (խառնակություն է), պղտոր ջրում ձուկ ողսալ (օգտագործել խառն հանգամանքներն իր շահերի համար), սատանայից յոթ օր աղաչ (ես, եմ, են) ձևվել (խորամանկ), մի ակաղնջով մանում, մյուսով գուրս գալիս (չի հասկանում, չի հիշում):

К. У. Геворкян

## УСТОЙЧИВЫЕ СЛОВСОЧЕТАНИЯ И ИХ ОТЛИЧИЕ ОТ ДРУГИХ ПОДОБНЫХ СЛОВСОЧЕТАНИЙ

### Р е з ю м е

Понятия в языке выражаются через посредство слов. Для одного понятия может быть выделено как одно самостоятельное слово, так и целостное высказывание — это устойчивые словосочетания. Признаки устойчивых словосочетаний следующие:

- а) они состоят из двух или более отдельных слов;
- б) в речи используются как готовые обороты; это означает, что они не образуются в процессе речи, как это бывает со свободными словосочетаниями. По этим двум признакам устойчивые словосочетания сходны с теми словосочетаниями, которые имеют готовую форму употребления — пословицы, поговорки, афоризмы, сентенции и т. д.;
- в) синтаксически не разложимы и не подвержены инверсиям и, как правило, их компоненты нельзя заменить даже близкими по значению словами;
- г) выражают какое-либо понятие, но не целостное высказывание. Этим они отличаются от пословиц, поговорок, афоризмов, сентенций и т. д.

В армянском языке устойчивые словосочетания бывают трех видов: сопоставления, составные слова и идиомы. Для идиом не существует окончательного и единого правила. Идиомами называются устойчивые словосочетания, имеющие переносный или аллегорический смысл. Вследствие переносного или аллегорического характера окончательный и фактический смысл идиомы не совпадает со смыслом ее отдельных компонентов.

Если в языке, с одной стороны, от самостоятельных слов образуются устойчивые словосочетания, то, с другой стороны, от некоторых устойчивых словосочетаний вследствие слияния в одно слово образуются отдельные самостоятельные слова.

Устойчивые словосочетания представляют объемистую часть словарного состава языка